

(L'honneur)

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ

Պոլսէն հասած տեղեկութեան համաձայն, Քիւզիք Սայիտ բաշա Ապտիւլ Համիտի արդի մեծ եւ պարզօր, որուն 1901 Հոկտեմբերին՝ իր Տէրովը սովորական վերադարձէն չնորհ ու վստահութիւն գտնելով, վախճանեալ մեծ վէզիւր՝ Խալիլ Բի-ֆաթ բաշայի յաջորդելը—ոմանց կողմէ Սուլթանին՝ իբր բարեկարգութեանց քաղաքականութիւնը ընդգրկելուն ազատ առհաստատեալ մը կրցաւ համարուիլ, իր հրա-ժարականը տուեր է. այս հրա-ժարականին զլիարար շարժառիթ կուտան խնայողական կարգ մը խնդիրներու կարգադրութեանը վերաբերութեամբ Մեծ-Եպարզօրին ու իր ստորադասեալ աշխատակիցներուն՝ նախարարներու միջեւ յառաջ եկած անհամաձայնութիւն մը. այս անհամաձայնութեան ծնունդը հարկ է սակայն աւելի հեռու ժամանակներու մէջ փնտռել. տակաւին մտքերու մէջ իր թարմ սպաւորութիւնը կորսնցուցած ըլլալու չէ, նախարարական խորհրդակցութեան մը միջոցին, Սայիտի ու Պատերազմական նախարարին միջեւ տեղի ունեցած այն գալթակցութիւնը միջադէպը, որուն հետեւեալքով Բիզա բաշա բաւական կոպտութեամբ խորհրդակցութեան սրահէն աւեր քաշեր էր, անգամ մըն ալ հոն չվերադառնալու համար իր հաստատ որոշումը յայտնելէ հետք:

Անշուշտ, Սայիտ բաշա, որ եւրոպական շրջանակներու մէջ ճարպիկ, կորովատեալ դիւանագէտ մը, ու զարգացեալ միտք մը ըլլալու համար կը փոխելէր, ու որ իշխանութեան իր բարձրանալու միջոցին՝ վարչական բարեկարգութեանց, տնտեսական խնայողութեանց նոր թուական մը բանալու իր մեծապէս հակամէտ ըլլալը հրապարակաւ յայտարարելու չէր թեւադրած, անշուշտ մէկէ աւելի անգամներ դառնապէս գանգատած պիտի ըլլայ իր Տէրովը մօտ, որ պաշտօնով ու աստիճանով իրեն ստորադասեալ նախարարները, իր պահանջած կերպով իր որոշումներուն համակերպելու. իր հրամանները գործադրելու մէջ կը դանդաղին, ու նոյնիսկ իրեն դիմադրելու կը համարձակին: Սալթան Համիտ, կարելի է երեւակայիլ, իր քաղաքային գերագոյն փոխանորդին այս բողոքները դիւանային գոհունակութեամբ մը, սկիզբիցէն իրենց մը հիւստիւնաւոր ըլլալու է. արդարեւ, ո՞վ չը գիտեր որ, իր քաղաքապետի արագեղութեանը զարհուրելի աւերներուն միջոցին, Հաւատացեալներու Հրամանատարը իր ներքին թէ արտաքին քաղաքական նութեանը հիմնական, էական

սկզբունք, ծրագիր ընտրած է իշխելու համար՝ իտալացի քաղաքագէտին (Մաքիաւելի) քարոզած վարդապետութիւնը. Տիվիտ ընդհանրեալ (բաժնէ, եթէ իշխել կուզիմ, ու կարծած է իր գահն ուստի անքոր աւելի հաստատ հիմքուրիւր զնել, իր քաղաքական գաղափար իր բարձրաստիճան ծառայեալուն շարքին մէջ անհամաձայնութեան, պաշտօնակաւի, գրգռումի ու մըր ցանկելու յաջորդած է:

Նոյնիսկ Սուլթան Համիտ իր պաշտօնականներուն նկատմամբ իր այս քաղաքականութիւնը մինչեւ ծրագրելի ծայրայիտութեանց յանգեցուցած է. այսօր, օրինակի համար, ծառայութեան, գործունէութեան մէջ գտնուող անոր ոչ մէկ նախարարը, ոչ մէկ վէզիւրը—բացի Ռստիկանութեան նախարարէն՝ որուն պաշտօնն է գիշեր թէ ցերեկ ամէն վայր աշայուրջ հսկողութիւն մը ընել, ու այս պատճառաւ իսկ Սուլթանի առջեւ ամէն նախարարէ բարձր վարկ մը կը վայելէ—կրնայ, առանց արքունական բարձր արտօնութեան, իր մէկ պաշտօնակցին հետ հաղորդակցել, կամ անոր այցելութիւն տալ, չըլագայութեան, ուղեւորութեան ելնել, նախապէս որոշուած ուղիէ մը տարբեր ճամբով իր պաշտօնատեղին երթալ կամ բնակարանը վերադառնալ, կամ վերջապէս ապարաքը. նորոգելու, բնակութիւնը փոխելու համարձակել:

Հետեւապէս, անտարակուսելի է թէ, Սայիտ բաշա, որ պահ մը կրցեր էր լրջօրէն հաւատալ թէ գոցէ պիտի կրնար քիչ մը կարգ ու խնայողութիւն բերել ստոյգ ու անդամանելի գահալիքի մը վրայ եղող թրքական վարչութեան ու Գանձին, չը քաշուի գործունեայ ասպարէզէն, համապատասխան անկարողութեանը, վերջնապէս վհատած էր վերջածանհատական ձեռնարկներուն յաջողութենէն, ու բռնուած, կաշկանդուած իր իսկ ձեռքով լարած թակարդին մէջ, — քանի որ նոյն այս Սայիտն էր որ, աւելի քան ուրիշ պաշտօնատար, ու իբր թէ կայսերական նորանոր շնորհներու ակնկալութեամբ հրապարակաւ, ժամանակին, իր Մեծ-Եպարզօրն եղած միջոցին, ամենէն աւելի աշխատելու տքներ էր Բիզան վարչական դարաւոր հեղինակութիւնը, գործեր կարգ դրելու մէջ ունեցած գաղտնիքները եւրոպացի ֆէօդալ փոխարդիւն, Համիտի ձեռքներուն մէջ կ'երգրոնացնէր:

Արդար էր որ Սայիտ բաշա իր ծառայութեանը արժանի այս վարձատրութիւնը ստանար:

Գալով անոր յաջորդին, Ֆէրիտ բաշայի Եպարզօրն անուանուելուն, Սուլթանը անշուշտ, իրեն Եպարզօրն կարգելով Մակեդոնական բաւարկարգութեանց քննիչ յանձնա-

ժողովոյն այս նախագահը, անգամ մըն ալ ուղած պիտի ըլլայ արդէն իսկ խաբուելու տրամադիր Եւրոպայի ցոյց տալ մակեդոնական խնդիրը կարգադրելու համար իր իրական (.) բարեացակամութիւնը:

Տ. Է.

ՄԻԱՄԵՆԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԵՐԿՍԵՌՈՐԻԱՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՎԱՌՆԱՅԻ

1901 Սեպտ. 29-ին—1902 Հոկտ. 1	
ՄՈՒՏԳ	Յր. ՍՃ.
Նախորդ վեցամսեայէն մնացած պատրաստի գրամ	2061. —
Միամեայ հաւաքուած բաժնեգրներէ	1421.40
Միամեայ նուիրատուութիւններէ	148. —
Տիկնանց մասնաճիւղէն	96.60
Մանուկան ամթիւ պնակէ	51.10
Չափուան » »	67.90
Եկեղեցիի մէջ » »	2.75
	3848.75
ԵԼԻ	Յր. ՍՃ.
Ակնայ Որբանոց զրկուած մէկ որբի տարեթոյակը	153.95
Մուշ երկու որբի	256.50
Վան երկու որբուհի	258.80
Կեսարիա մէկ որբի	129.80
Վարազայ վանքի » »	137.25
Տիվրիկի » »	128.80
Արաբկի » »	123.65
Սեբաստիա » »	123.65
Մուշ » »	123.65
Սեբաստիա » »	118.70
Վարազայ վանքի » »	118.70
Կարին երկու » »	232.50
Եղեւիտ մէկ » »	116.05
Հաւաքչի մէկ տարուան իրաւունք	150. —
Մնացած սիկառի թուղթէն վնաս	10.40
Մէկ տարուան ամբողջ ծախք	17.80
Գանձապետի քով գանձելի տուներ	225.80
Թատերական ներկայացումէն մնացած ապառիկ	5. —
Գանձապետի քով պատրաստի գրամ	1418.25
	3848.75

Ի գիմաց Գործ. Ժողովոյ
Վ. Ասեմապետի Ստեփանայի
Ս. Մարիանան Յ. Կ. Ճանկիւղեան
Գանձապետ
Խ. Ազնաւուրեան

Նոյեմբեր 17ի Ընդհանուր Ժողովը քննիչ յանձնախումբ մը կազմեց չորս անդամէ բաղկացեալ, որպէս զի յիշեալ յանձնախումբն նախորդ Գործ. Ժողովոյ միամեայ հաշիւ կաշիւն քննելով՝ ճշգրտեալ տեղեկագիրն գրեւորապէս Դիւանայ յանձնախումբի տեղեկագիրն առնելով՝ Գործ. Ժողովոյ հաշուեկշիւն հրատարակութեան կուտայ. եւ ըստ յանձնարարութեան Ընդհանուր Ժողովոյ, կուգայ ի գիմաց Ընդհանուր Ժողովոյ շնորհակալութիւն յայտնել նախորդ Գործ. Ժողովոյ մէկ տարուան անձնուէր եւ արդիւնաւետ գործունէութեան եւ ուղղամիտ պաշտօնավարութեան:

Մնամք Յարգանք
Ի գիմաց Ընդհ. Դիւանի
Ասեմապետ Ստեփանայի
Յ. Յ. Թուպլըլեան Արշաւ Բաշանեան
Վառնա, 29 Նոյեմբեր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՍԼԻՄԱՍ, 20 Նոյեմբեր

Ենթիւններն անփոփոխ կերպով շարունակուած են իրենց ընթացքը: Ինչպէս երեւում է, այդ պարունակը որոշել են իսպառ քորու քանի աւել Սալմաստը: Նրանց համար սթափուել, յիշողական չկայ. իր գնականակը ենթիւններն սխալագործութիւնները օրէ ցօր աւելի մեծ ծաւալ են ընդունում: Օր չի անցնում, որ Սալմաստի գիւղերում սպանութեան, բռնաբարութի կամ սպանալիքներով փող առնելու դէպքեր չպատահեն: Կոտաւարութիւնը բոլորովին տրամադիր չէ պաշտպանել տեղական ժողովուրդը ենթիւնների ռաճգութիւններին դէմ: Ընդհանրապէս նա վերջինների կատարած շարագործութիւններից օգտուելով բանտարկում է խեղճ անմեղ գիւղացիներին եւ մեծ գումարներ փրկանք առնելով բաց թողնում: Այդպէս մօտ օրերս Հաֆթլան գիւղում տեղի ունեցած սպանութեան մի դէպք: Այն գիւղում ապրող ենթիւնական խումբը թշնամացած լինելով նոյն գիւղում ապրող Յակոբ անունով մի պարոնի հետ, որը երկար ժամանակ ըսչկուութեամբ էր զբաղւում աղքատներին, որոշում են սպանել նրան: Երկու օր առաջ ենթիւններից երեք հոգի մօտեւում են գիւղերով Յակոբի տանը եւ ինչ որ պատրուակով գործ կանչում: Խեղճ եւ միամիտ մարդը հազիւ երեւում է չէմբում, երբ յանկարծ փոշոցում սպասող ենթիւնները յարձակուած են վրան եւ տեղացի գրեւորակների տարաքի տակ կրկու մահացու վէրք տալով գետին փռում: Դէպքի հետեւեալ օրը կատաղաբութիւնը, երկու թեւան մասին տեղեկանալով, բանտարկում է գիւղի «աղաքակալներին» ու չի հոգում, որոնք, ի հարկէ, բոլորն էլ անմեղ էին եւ ոչ մի բանից տեղեկութիւն չունէին: Նշանակելին այն է, որ բանտարկուածները թուում գտնուած է նաեւ այդ գիւղի ուսուցիչը: Իսթաբուլից բարեալը բար թէն մահաւոր, վերաբերուել գետ կենդանի լինելով յայտնում է կատաղաբութեանը, որ գիւղացիք անմեղ են, թէ ինքը ճանաչում է իրեն խփողներին, բայց Սարիարաստը չուզելով զրկուիլ այդպիսի մի բարեպաշտ առիթից եւ համեղ պատասխան, գիւղացիներին բաց չի թողնում, այլ պահանջում է կամ իրեն յանձնեն մօտապահներին կամ 400 թուման սուղանք վճարեն: Առաջինը, այսինքն ենթիւններից բռնել եւ կատաղաբութեան յանձնել անհնարին բան է գիւղացիներին համար: Մնում է խեղճներին բանտից ազատուելու միակ միջոցը՝ վճարել որոշուած տուգանքը, եւ երեւի այդպէս էլ լինելու է:

Բայց ո՞ր կը տանի Սալմաստեցուն այդ մի կողմից անվերջ առաքանքները, իսկ միւս կողմից ենթիւնների գործը դրած անթիւ ու անհամար ոճրագործութիւնները: Սալմաստեցի հայտնաբեր քաղաքային մեռած է, տնտեսապէս քայքայուած: Նրա պատիւը ոտնակոխ է արուած, ընտանեկան սրբութիւնը պղծուած, հարսը, կինը, աղջիկը բռնաբարուած ենթիւնների կողմից, իսկ ինքն էլ գերի դարձած այդ ոճրագործ սրիկանի ձեռքում: Իսկ կատաղաբութիւնն էլ, փոխանակ օգնելու խեղճ ժողովուրդին, լրացնում է նրա սեւ օրերի պակասը անվերջ առաքանքների երթարկելով: Գուցէ շատերը կարծեն, որ Սալ-

մասնը հարստահարող ենիչերները թիւը մեծ է լինելու, որ նրանք կարողանում են բռնաբերել 15,000 հայ ժողովուրդ ունեցող մի գաւառի վրայ: Բայց այդ այդպէս չէ: Սալմաստի ենիչերները թիւը հազիւ 20-22-ի է հասնում: Նրանք բաժանուած են ներկայումս երկու անհայտ խմբերի: Այդ խմբերից մէկը, 7-8 հոգուց բաղկացած, բոյն է գրած Հաֆթվան գիւղում եւ կրում է Ա.Ս. անունը, իսկ միւսը, որը աւելի մեծ է, — Ս. եւ Մ. գիւղերում եւ կրում է Դ. անունը: Թէ որքան թշնամի են այդ խմբերը իրար հետ, ցոյց են տալիս այն յաճախակի ընդհարումները, որ տեղի են ունենում նրանց մէջ: Եթէ մի բան կայ, որի մէջ դրանք հայտ են, այդ էլ ժողովուրդի կեղեքման գործն է, որն այնքան զարհուրելի կերպով առաջ են տանում:

(Նոր-Դար)

ՀՐԱՅՐ

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Նախկինում խումբը վաղը երեկոյ կոչումայ իր վերջին ներկայացումը՝ որ է «Ս. Պողոս եկեղեցւոյ զանգակահարը» ու զաւելումը՝ եւ կը մեկնի Պուրկազ ու Յիւլիպէ: Հետեւաբար խումբը չպիտի կրնայ շարունակել Մօնթէ Քրիսթոյի ներկայացումը, որ հակառակ հասոյթի նուազութեան, արտասովոր ծախքեր կը պահանջէ, եւ մանաւանդ վարձակայր միշտ իր խոստմանց կը դրժէ, ստէպ կիրակի եւ տօն օրերը սրտհար որիչներու վարձու տալով:

(*) Ա. կը նշանակէ Արմենական. իսկ Դ. կը նշանակէ Դաշնակցական: Կովկասի թերթերը հայ լեզ. կուտակցուած կցութեանց անունները ամբողջ գրելու ազատ չըլլալով, միայն սկզբնատառերը կը գործածեն:

Ի. Խմբ.

Կը ցաւինք որ վառնայի հասա. բախտը ինքն մեծաւ մասամբ դեռ չէ ստացած մտքի այն զարգացումը եւ ճաշակը որ կարենար արդեամբ գնահատել լուրջ թատերախաղերը եւ վարձատրէր խումբը մը որ իրեն սկզբունք ընտրած է միշտ կրթիչ ու հրահանգիչ խաղեր ներկայացնել:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Օրմնակեան պատրիարքը

սպաննեղոս փարս

Պոյսոյ բժշկական վարժարանի Գ. կարգէն գեղարդութիւնն ուսանող Յ. Կիր խաչիկեան անունով երիտասարդ մը, Ծնունդի օրը Գումգաբուի Մայր եկեղեցիին մէջ պատարագի տալին, Օրմնակեան պատրիարքին վրայ երկու գնդակ արձակած է, որոնցմէ մին ուսէն վիրաւորած է Պատրիարքը. վերջը վտանգաւոր չէ. Յ. Կիրը ձերբախալուած է: Հեռագիրը կըսէ թէ Գումգաբուի փողոցները, Պատրիարքարանի շուրջը զինուորական հսկողութեան տակ առնուած են. բազմաթիւ ձերբախալութիւններ կատարուած են: Հարցաքննութեան միջոցին Յ. Կիրը քսած է թէ նպատակ ունէր Օրմնակեանը սպաննելու, որովհետեւ սա զինքը աքսորել տալ ուզած է:

— Անահիտի տնօրէնը սկսած է կազմակերպել հայկական արուեստի երկրորդ երեկոյթ մը, որ պիտի ունենայ անցեալ տարուան երեկոյթին ծրագիրը, բայց որուն մէջ այս անգամ աւելի մեծ տեղ պիտի տրուի հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան փոխեր Օպերի, Յրաւմայի ծանօթ

երաժշտագէտն ու հայագէտը, բանաստեղծին մը պիտի արտասանէ հայ երաժշտութեան վրայ. Պ. Շարլ Պորտի երգիչները, որոնք եկեղեցական երգեցողութեան լաւագոյն երգիչներն են փարիզի մէջ, պիտի երգեն հայ եկեղեցական երաժշտութեան բազմաթիւ հատուածներ, խօսքերը ֆրանսերէնի վերածուած, ու եղանակները Պոլսեցի նախկին դպրակաւն ու հայ եկեղեցական երաժշտութեան քաջամանօթ Պ. Դակոբեանի ձեռքով ձայնագրուած: Հայ արուեստագէտներ պիտի երգեն մէկ քանի ժողովրդական երգեր. հին եւ նոր հայ բանաստեղծութիւններու ֆրանսերէն թարգմանութիւնները պիտի արտասանեն Քոմէտի-Ֆրանսէզի եւ Օտէնի քանի մը մեծ արուեստագէտներու կողմէ. — երեկոյթը տեղի պիտի ունենայ յունուարի վերջը. հասոյթը պիտի յատկացուի դարձեալ որբախալ գործին:

Անահիտ

— Ռումանոյ Դոնապիա քաղաքը բնակող մէկ քանի ռազայինք իւնեց մէջ՝ կովկասէ հայրենիք վերադարձող հայ գաղթականաց ի նպատակ հետեւեալ հանգանակութիւնը կատարած է արդիւնքը զրկած են տեղւոյս Հանգանակիչ Մասնախումբին:

Տ. Ստեփան Թակերեան	22. ֆր
» Ալմանաս Զատիկեան	20 »
» Համբարձում Տէրտէրեան	5 »
» Զաքար Սարաֆեան	5 »
» Մարգար Դաւիթեան	5 »
» Աստուր Մարտիրոսեան	3 »
	60

— Քննութեանցայի թաղ. խորհուրդը իսրաւ է մեզմէ հրատարակել իր լէկ տեղեկագիրը քորով ամօթահար կընէ հայ կղերական

նութիւնը, նկարագրելով Աթէնքի խորէն քահանայ Մուրատեանի գործած անառս կոթիւնը երբ Գոնսթանցայի Լոնտրա պանդոկին մէջ: Մամուլէն եւ կղերէն ակնկալուած պարկեշտութեան դէմ մեղանշած չըլլալու համար, մենք չենք հրատարակել այդ պաշտօնական տեղեկագիրը, որ գլխաւ պոստտալու չափ սարսափելի է, իբր նոր պատկերացում մը սողոմական մեղքերու որ այդ ճիւղը քահանան գործած է նոյն պանդոկին մէջ, մօտաւորապէս հազար ֆր. մսխելով, եկեղեցւոյ այդ անարժան պաշտօնեան Աթէնքի մէջ եկեղեցի մը շինելու համար, կաթողիկոսական կոնգրակով, ժապաւնեալ տոմարով մը ու Պատրիարքարանէ եւ Աթէնքի Հոգաբարձութեան յանձնարարական պաշտօնագրով Ռումանի քաղաքները կը շրջէր ու հանգանակութիւն կընէր ամիսներէ ի վեր ահաւասիկ այդ հանգանակութեան գոյացած 1000 ֆրանքն է որ 8-10 օրուան միջոցին առնաւորութեամբ վատնած է քանսթանցայի պանդոկին մէջ: Անգիւն Աթինայի Հոգաբարձութիւնը թող դրամ սպասէ...

— Եղբարք Ժամհարեան Դրամատունը 5000 րուպի յանձնած է Մոսկուայի քաղաքապետութեան, բարեգործական նպատակի գործածելու համար, ի յիշատակ ողբացեալ իսահակ Ժամհարեանի:

— Տիգրիսի թերթերուն մէջ կը կարգադրէ թէ իսահակ Ժամհարեանը իր սպաննուած օրը եկեղեցի երթալով նպատակ ունի եղբոր խոր հղալը երբ յանձնարարութեամբ հրաւիրելու մի քանիսն իր մօտ՝ խորհրդակցելու թէ ինչ միջոցներով կարելի կը լինի աւելի ամուր հիմքերի վրայ դնել որբերին խնամելու գործը...

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(45)

Թ. Ի. Ա. ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ԱՌԱՔԵԼ ԻՓԷՆՏԻՆ

— Շատ աղէկ, կեմ գեղի ուսուցչին քով քանի՞ օր մնացիք:
— Շաբաթի մը չափ:
— Ի՞նչ ըրիր այդ մէկ շաբաթուան մէջ:
— Օգը գեղեցիկ ըլլալուն, քանի մը օր աւելի մնացի հոն:
Առաքել էֆէնտին ակամայ շարժում մը ըրաւ ու ըսաւ.
— Սո՛ւտ է որ գուք «Շատխու-Կէտիկ» կոչուած կիրճին մէջ սպաններ էք քուրս մը:
— Ե՛ս:
— Այո՛, դո՛ւք:
— Սո՛ւտ է:
— Ո՛չ, սո՛ւտ չէ: Ծանցողներ կան ձեզ:
— Ամենեւին: Նախ եւ Շատխու-Կէտիկէն անցած չեմ: Ատանկ բան մը ինձի պատահած չէ:
Առաքել էֆէնտին ոտքի ելաւ ու ներս կանչեց հուժկու կազմուածքով ոտքիկան մը: Երբ ոտքի-

կանը վազգէնի քով կեցաւ. Առաքել էֆէնտին հրամայեց անոր.
— Մուստաֆա՛, շուտով մերկացուր սա թշուառականը... միայն չապիկ մը ու վարտիկ մը թո՛ղ վրան:
Մուստաֆան անմիջապէս կապեց խեղճ վազգէնի թեւերը, կապեց ոտքերն ալ ու հրեղով գետին տապալեց զինքը:
Յետոյ թէ՛ ձեռքերուն եւ թէ՛ ոտքերուն կապը քակելով սկսաւ պտկած տեղ մերկացնել զանի:
Երբ քստմեղի արարողութիւնը կատարուեցաւ, չուանը անցուց ձեռքերուն ու ոտքերուն ուժգին կերպով մը:
— Ա՛ն ճպտոք ու զարկ... տեսնե՛ք ի՞նչ կուգայ դուրս, պօռաց Առաքել էֆէնտին:
Մուստաֆան հրամանը կատարեց:
Տասը ճպտի արուած իրարու հետեւէ գարկաւ բանասարկեալի ոտքերուն, մինչեւ որ արիւնը կաթիլ կաթիլ դուրս ցայտեց անոր եղունգներուն ծայրերէն:
Սո՛ղ հարուածներէն ետքը մարած էր երիտասարդը:
Անխիղճ Առաքել էֆէնտին ոտքի ելաւ, արհամարհանքով մը կալանաւորին մօտեցաւ ու անոր մերկացած թեւին դաստակները բռնեց:
Յանկարծ աչքին նշան մը երեւցաւ:
Առաքել էֆէնտին զողողալով այդ նշանին վրայ նայեցաւ ու սկսաւ քննել զայն:
Այդ նշանը կալանաւորի օջաղակին վրայ քանդակուած էր, եւ անա՛ ինչ որ գրուած էր հոն.

18..

Ս. Երուսաղէմ

— Վանք —

— Ի՞նչ է այս... ի՞նչ կը տեսնեմ... բացազանչեց Առաքել էֆէնտին ու հրամայեց Մուստաֆային որ ջուր դարնէ բանասարկելոյն երեսը:
Մուստաֆա դաւաթ մը ջուր առաւ ու սրկեց երիտասարդին երեսն ի վար:
Տակաւ առ տակաւ ուշքի գալով, վազգէն աչքերը բացաւ, չորսդին նայեցաւ ու հառաչեց:
Առաքել էֆէնտին աչքով նշան մը բրաւ Մուստաֆային որ դուրս ելնէ: Մուստաֆան իր ճպտան առաւ ու դուրս ելաւ:
Վայրկեան մը խորին լուռութիւն տրեց:
Առաքել էֆէնտին իր գոհին վրայ կը նայէր. իսկ վազգէն իր բռնաւորին վրայ:
Մին ստրուկ մըն էր՝ գետնին վրայ ինկած, իսկ միւսը՝ հրէշ մըն էր որ զարհուրելի նայուածքով մը մը կը դուլար:
Վերջապէս՝ խորհրդաւոր ու ազդեալի մտածումէ մը ետքը, Առաքել էֆէնտին երիտասարդին ձեռքը բռնեց ու ըսաւ.
— Ի՞նչ է այդ թեւիդ նշանը:
— Սո՛ղ, հարցուց կալանաւորը:
— Այո՛:
— Ատիկա նշան մըն է որ ես Երուսաղէմ գացած եմ:
— Երուսաղէմ:
— Այո՛:
— Ո՞ր թուականին:

(Շարունակելի)

